

18890

18891

18892

891-99
4h-31

1. Փափառիչ, Արք՝ Պրայն ՀԱՅԻ
2. Բայր Բայր Ազր՝ Վահանական
3. ՎՃԱՐՔԻՂԻԴ

ԱՐԵՎԱԿԱՆ

Էջ	Տող	Սխալ	Ուղիղ
5	17	իրաքանչիւրն	իւրաքանչիւրն
15	3	սրպէս	սրտէս
15	13	մ'ունիմ	մ'ունին
26	14	բուրաստանին	բուրաստանին
43	13	յանմիկ	յայնմիկ
67	3	երանց	կերանց

ԱՐԴԱԿԱՑՉԵԱՅՔ



891.542-1

F - 37

ԲԱԱՏ ԲԱՂԴ ՈՒԽԻ

Ա.

Ա Թ Հ Ա Խ Ա Տ Զ Ձ Ե Ա Յ Ք
100⁴
150⁶⁸



Ի Վ Ե Կ Ե Ա 1896

Ի Մ Խ Խ Թ Ա Բ Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն Ի

4364

Ի քերթուածոց իւրոց
Եւ ի Նուազաց Տաղաչտիականաց
Հստ դիպաց եւ ըստ պարազայից
Յայլեւայլ տեղիս յերիբելոցն
Հգկարճառուագոյնս ընտրեալ
Եւ Յիսնեակ մի կազմեալ
Ուրոյն տպագրութեամբ
Եւ Առհաւատչեայ յորջորջմամբ
Ի լրս ածէ ԲԱՍՏ ԲԱՇԴ ՈՒՆԻ:

Զոր ախորժ հաճութեամբ
Առ ի ցուցակութիւն
Բնածին երախտագիտութեան իւրոց
Ընծայէ յանմուանալի
Եւ ի յաւերժական յիշատակս
Ճնողաց իւրոց Սիրելեաց
Ննջեցելոցն ի Տէր:

Ի Թուականի մարդեղութեան
Աստուածորդույն
ՄՊՋԲ

Դ Ա Բ Ի Ք Ե Ր Ե Վ Ա Գ Ո Ւ Թ Ե Խ Ո Յ

Ի Հ Ա Խ Ե Մ Ա Պ Ե Լ Ե Ա Խ

Յ Ի Ս Ն Ա Մ Ե Ս Յ Ք Ք Ա Հ Ա Ն Ա Յ Ո Ւ Թ Ե Ա Խ

Ա Մ Ե Կ Ա Պ Ա Տ Ի Ք Ա Բ Բ Ա Հ Օ Բ

Ա Ր Ա Է Ա Ր Բ Ե Վ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ի Վ Յ Ա Խ

Յ Ա Շ Ա Յ Ա Յ Ա Խ Ե Վ Ե Ր Ե Բ Ո Պ Ո Ե




Ա Ռ Ի Ա Գ

Առ դուրս մերձեալ անեղ տարւոյն
Յոքելինի տօն հաս ուրոյն՝
Ռը ճիմաղիք նոր զբաղութեան
Եղեւ ազգին Ասրանազեան:

Նա մեք ուսման վասնալ ի սէք,
Մշշակեաց զայն անձնանըւէք.
Ուկեղարուն հետեւելով
Որ ինչ էք զեղծ մաքքեաց ի սով:

Զգնա վըսեմ հըռչակեցին
Աքուեստագէտ հընշտակացին
ՇԵրջանք աւուրց յինսամեկին:

Ղզնա՝ վաստակքըն բազմաչան
Ի վեր հանին փառաց խորան
Ղզնա տօնեմք յաւերժական:



Ա.

ՆԱԽԱԲԱՆ ԱՌ ՊԱՇՏՈԱՆՆ


Ե՞ր սին յուտով եւ անձանձիք
Զմուսայս եւ զղիս կարդամ, նաևիք.
Իցէ՞ նոցին կարողութիւն
Շընչել ի տողս Երկնից զայիւն:

Ո՛չ, այլ առ նա ծայն իմ՝ ժամնն
Որ արծարծեացն ըզլոյս ուսմնե.
Ի հայրենիս ջանահընար
Երկնեալ ծընաւ զուկեղէն դար:

Հայոց տառից Քերթողահայր
Ինձ երգողիս տուր ըզհանճար,
Որ ի Դողման զեղեցկախօս
Հանդիսացար բարւոյն ըարող:

Յորդոց յորդիս յուկի քանդակ
Յաւէրժանցի ըո յիշատակ.
Եւ ասպարէզ զրականութեան
Ժաղկեցի Քեւ ի Հայս համայն:

Այսքան մշրմունջ քեզ յանդիման
Բըսեն շըրթունք իմ երգաբան.
Անձուկք սըրտիս միահաղոյն
Օն դուք հասէք յականջ Սըրբոյն:



Բ.

ՈՂՈՔ ԷՐ Ս. ԼՈՒՄԱՆՈՐԻՉՆ

Լուսաւորիչ Համազգեաց
Բնակեալ յաստեղս առ Աստուած,
Բզքո դարձեալ հայեցուած
Գըթա՛ ի մեզ եւ հաշտեաց:

Ահա հօտն այն լուսազգեաց
Եղեւ առակ իւր դրացեաց,
Աստ անդ քամին եւ հատուած
Զի քոյ շաւղէն նա շեղեաց:

Մի՛ հ՞ յաւէրժ իրերաց
Խէթս ունիցին ոխազգած,
Օ՛ն եկեցէ կատարած
Վըրդովլալից աղմըկաց:

Միթէ վայել մարտընթաց
Յառնել ընդդէմ չարց Եղբարց,
Հայոց աշխարհ մեզ եկաց
Մի խանճարուր անմոռաց:

Դու Գրիգորէ՛ գերապանծ
Փութա՛ հեղուլ յեթերաց,
Ի մեզ կաթիլ սիլոյ կայծ
Միշտ պահելով զայն արծարծ:

Յոյս մեր առ Քեզ են Հայր, զըթած
Լուր ըզմըրմունջս մաղթանաց,
Եւ ի համբայր հաշտամած
Հայտատանեայց զորդիս ա՛ծ:



¶ .

ԳԱՐՈՒՆ ԵՂԱՄԱԿԻ

Սառնամնիք ցըրտասարսուն
Անհետասցին լսալսու լսալուն
Եւ արեգին Ծեր բարերար
Մանկանացւաց լիցի սատար:


Մինչդեռ զարոն
Ճիծալագոյն
Քեզ ժամնենէ
Յայսլմ՝ հետէ:

Դաշտը ըզգենուն կանաչաքեղ
Պէսպէս ծաղկամք սպըճնեալ շրբեղ.
Եւ լիճ ծովու կապուտագոյն
Ալեաց հոսմամք է պաղպաջուն:

Այն ինչ զեփիսո
Սիլահամբոյր
Շընչէ համայն
Մեզ յանդիման:

Մինչդեռ ծիծուանց դաս յելեւէջ
Ընդ հորիզոնն առնուն անվերջ՝
Շըռուղելով առետաքեր
Նորոգ կենաց կարդան հրաւեր

Բարեաւ գարուն
Բարեօք զեղուն
Ե'կ առ մեզ յար
Բարեաւ հազար:



¶

Թ Ի Թ Ե Թ Ւ

Ի տես ծաղկանց դաշարեաց
Միլով մաշեալ անմիոաց,
Աղուաշաբար լնթանայ
Ոչ դուլ առնու ոչ ըզկայ:

Թեւքն են փայլիկք երիմնազոյն
Իրան թեթեւ գարդարուն,
Հզլոց խընդրէ ըզճանանչ
Ի վեսս անձին սիրատանջ:


Բարդին ըզհետ մահածին
Ածի յաւէրժ կաթոզին՝
Դիսեալ հապճնապ ի հրոյն կայծ
Ողջակիզի անձկայրեաց:

Այ վայ սիրոյս թիթեռնիկ
Անփորձ բարուք խաղալիկ
Ե՞ր քո զարեւ վաղահաս
Շիջուցանես յայս սարսա:

Պատանի քեզ առջիր խրատ,
Ոչ անկցիս ընաւ յորոգայթ՝
Տեսեալ զանփորձ թիթեռնիկ
Հզզանստ ի սէր խաբուսիկ:



8
00
0
—



Ե.

ԲԱՆ ԶԱԻՆԵՑՑԱԿԱՆ


Հստ ցանկութեանս ինձ ո՛ տայր
Զօրեղական ոյժ եւ կար,
Ի բոցաշունչ յերիվար
Նըստել զընալ յառապար.
Հզզազանաց ամենեաց
ծըւէնս առնել մընացուած,
Լերինս հարթել դաշտավայր
Զանդունդս լընուլ անըսպատ :

Պատուէր կալդալ փոթորկաց
Ի սիւք փոխել ճեսլընթաց,
Զամբարտաւանս ետ ընդ ետ
Յաճին փոխել ահավետ.

Հզմուշ այրեալ ըզտատասկ
Վարդիւր ծածկել ըզպուրակու,
Հզճանճ, զոջիւ, ըզկարիճ
Առնել յերկրի համաջինչ:

Սաստել ալենացն ի ծովու
Կալ յախտեան յանդուրու,
Սառնամանիս խափանել
Հզջեր զեղուլ առաւել.
Հիմանդութիւնս համօքէն
Ի բաց ըստնալ յաշխարհէն,
Շըրջել յաւէտ ի դիրին
Որ ինչ յերկրի ոըժուաբին:

Դործել այսքան իմ' է կամ
Այլ ոչ կարեմ' ինչ տարտամ':



Զ.

ՍԱՐՍԱՓ ՅԵՊԱԿԱՐՃ

Ի նեղուեան զետ լայնատարը
Դոյզն ի մակոյկ՝ եղէ թիսկար
Ի տօմազին օդ ամսուն
Որոնելով ըզգով սահման:


Այսպէս զըւարթ եւ անկասկած
Նաւարկեցի հետի յափանց
Ի հոսանուտ ջուրց ասպարէզ
Ով արկածոց՝ տեսանեմ' ես:

Սոսկալի մի կոկորդիլոս
Սլացեալ առ իս զայր յանվեպ որս.
Սիրտ իմ' բարախ յահեղ տազնասպ
Փութով ընդ կրոնկն ետու խուճապ:

Ի զարհուղանս անդ մեծայոց
Յօզե ինձ կարդամ՝ յայսկոյս յայնկոյս
Հազիւ ուրեմն եղեալ ժաման
Յափունս ուրեք պատղապարան:

Անդէն հասեալ հրէշն անհեթեթ
Առ ի կըսնել զիս կայր ընդ ետ.
Ես գողղոջուն զարթեալ յանկարծ
Գըտի զանձն իմ՝ պատրեալ յերազ:

Կեսարիա 15. է. 72.



Է.

Ա Ռ Ե Պ Ծ Ո Ւ Ա Ճ

Զըսեալ ընդ ծով ընդ առապար
Հասի երբեմն յաշխարհ օտար.
Տեսի անդէն գոգ եզական
Անաստն մի ի մէջ մարդկան:


Ոչ զիտացի ես հաւաստեաւ
Թէ երեւոյթն իցէ իրաւ
Մարդ, թէ հրէշ ինչ անքանական
Եւ կամ միւս էշ բաղասամեան:

Ի տըւընջեան խօսէր լեզու
Խաւարահունչ իբրեւ ըգբու
Որով կուտէր ոքեան յոլով
Քզնա յաւէտ ծանսակելով:

Ինքնին որբան տեսլեամբ անարդ
Այնքան նորին յորի են բարք.
Ուր ես պատմել մի մի համայն
Հզնանզամնս չեմ բառական :

Հզնա կոչեն զաւեշտաբար
Հիւծեալ սրբտից ըսփոփարար
Եւ հոտալէտ զարդ ի պարտէզ
Բողբոջացեալ ի գոյն պէսպէս :

Թէ ինձ թողցի կոչել ուրոյն
Վայելէական նըմա անուն
Կապիկ է նա Եզրոսեան
Աղաւաղեալ պատկեր մարդկան :



Է.

ՊԵՇՅՈՒ ԱՌ ԱՍՏՈՒԾՃ

Հսթափմամբ զաշաց քուն անձն իմ՝ յողդորդ
Անեն Տէր առ Քեզ առնեմ՝ առաւօտ.
Առ զանյոտ անկեալ փառաց լուսալիք
Յարգանօք խոնարհ պազանեմ՝ երկիք:



Որպէս ըզծագումն արիւոյն զուարթերես
Հըրճուանօք լի է սիրու իմ՝ սիրակէզ.
Անմանից դասուց խառնեալ ընդ երամ՝
Պաշտել հանսպազ ըզթեզ Տէր ցանկամ:

Կամիմ՝ եռանդեամբ ընդ ըիւր ճայնս նոցուն
Հըռչակել ըզթեյ մեծ վայելէտիւն.
Սըրբեա՛ Աստուած իմ՝ լեզուս զօրհներգու
Ընկալ հաշտ ակամբ յաստեղս լու ի լու:

Զոր վերառաքեմ զերզոցը մըրմիւնջ
Խըրեն ըզծաղկանց անուշահոտ փունջ.
Համազոյից Տէր, բարութիւն անճառ
Աջով Քով հրզօր մի՛ զնացից թափառ:

Յիս Աստուածութեանդ լզշող կաթեց'
Զի վարք իմ' եւ զործք իցեն Քեզ հաճոյ.
Հուսկ ուրեմն յաստեաց հողիս սաւառնեալ
Առ Քեզ Տէր յեղեմ սլասցի փայլ ի փայլ:

Տարան Յ. Է. 72.



Թ.

Ս. ՅՈՅՐ ՎԱՊԱՄԵԹԻԿ

Անոն իմ' Էր սփրոն Սուրբիկ
Յարեւ կենաց դեռափայլիկ.
Գեղապարոյր իմ' խոպովիք
Հոտոտելի իբր ըզծաղիկ:

Յայզօրէի ըըրըմազգեցիկ
Յայտէր անձն իմ' տիօք զողորիկ.
Թեթեւարայլ որպէս ճայիկ
Յերեքամեայ ի հասակիկ:

Աչս ունելով կապուտակնիք
Պարս ոսկեզոյն, այտ ուռոցիկ
Դեղատեսիլ եւ խասուտիկ
Փէս տատրակի բարուք հեզիկ.

Զըւարթերես ծնողաց ի զիրկ
 Առ ի դադար նընջեալ մընջիկ.
 Յորժամ՝ զարթեայ ի քնոյ մեղմիկ
 Տեսի ես նոր կեանս երջանիկ



Յանմահութեան սուրբ ոստանիկ
 Սուրբիկս ընդ սուրբս ցընծամ՝ այժմիկ
 Բարեխօս միշտ եւ զօրասիփ
 Հարազատաց եղբարց ըընիկ:

Եւկոկիս 6. Ը. 72.



ԿՈԾ ԱՌՑՆԻՆ

Երբ ոնէի պատանեկան
 Հասակ կենաց երկուսասան.
 Մանգաղ մահու անագորուն
 Բաղեալ զիմ մայր դարձոյց յաճիւն:


Ո՞վ դառնազին դըմբախութեանս
 Որ ընկըլմինաց ի տան համայն
 Զամնեսին թաթառ ի տուզ
 Յողը եւ արտօսը հեղճամըջուկ:

Յօրէ անտի յաւէտ զողցես
 Յիշեալ ըզմայը մորմոքիմ ես.
 Որ յանդրանիկս չըմամնեաց
 Խնամոցն ունել ըզիոխաղարձ:

Թէ պակասէք յոց մեր անձին
Հանդերձելոյ կենաց բաժին
Երբեք ումեք չէք ինչ հընար
Հանդիսանալ մեզ մըխիթար:

Բա՛թէ մնայր իմ՝ ակն ոնիմ՝ ես
Հանդիպել քեզ յերկնից վայելու
Անդ ըզ Սուրբիկ, Պողոս, Յովաէփ,
Զեղբարս անձկառ զըզուել ըստէս:

Անդ ժամանեալ հայր մեր ընդ մեզ
Դադարեացի յաւերժապէս.
Անդ Անդքէսս, Թագուկ, Եւզին,
Ընդ Բաղդոնեոյս բափոփեսցին:



Ճ. Ա.

Ի ՏԵՍ ՀԱՅՐԵՆԵԱՅ

Հասի յիմում տոն հայրենի
Կարդամ անձինս քիւր երանի,
Փառք Էից Տեառն որ անվլոտանգ
Պահեաց զանձն իմ՝ յամըս տասնեակ:


Տեսի զեղբայր ըզքուս երկու
Քաղցր ի քիմն քան զանոց մեղու,
Հզսիրելս համանզամայն
Տեսի ի ժըպիտ յիմ՝ տան ժաման:

Ընդառաջեալ իմ՝ քերկրազին
Առ ծընտղն իմ՝ ողջ ի մարմին
Սիրտ բարախոն եւ սիրաթոյր
Դըրկեալ ըզնա ետու համբայր:

Այն ես հօր կամ պարտական
Որ զիս հասոյց ի տուրք վախճան.
Արտայայտեալ զիղծ իմ նըմին
Կեցչիր ասեմ հայր թանկազին:

Շընորհակալ յաւերժաբար
Խնամոց նորին ջանահընաբ
Հայցեմ յԵրկնից վասպն նորա
Զերջանիկ կեանս աստ եւ ապա:

Նոր հոդվ 20. Ը. 73.



ՓԲ .

ՅԵՏ ՏԱՄՆԵՒԹԻԹ ԱՄԱՅ

Ո՞ւր մանկութիւն իմ՝ ծաղկափթիթ
Եսք վազս առեալ ընկ ծով, հովիս
Ի վրափորեան յափունս ծիծաղ
Յածեալ գայի յալիս թաթակս:

Ի վրտանզաց անփորձ համակ
Որոց ընող մէջ անխոչընդակ
Իրք ըզծիծեոն աստանդապէս
Ծըուողէի ընութեան ի տես:

Շուրջ անդ զինեւ գեղապարոյք
Պարեալ բարիք միահամուռ
Մ'երթ յորս թըռչոց մելթ յորս ծըկանց
Հնմանսցի խայտասըլաց:

Հնդէր անցին աւարք հեշտինը
Յափլշտակեալ զիմ' անս զողալիկ.
Յաւէրժ կորեաւ թեթեարայլ
Իմ' մանկութիւն ծիծաղափայլ:

Դարձեալ անդրէն յափունս հեշտին
Ի զքօսավայրս իմ' առաջին
Դքտի առաջ յածեալ ի չիք
Որ ինչ յերկըի յոյս խաբուսիկ:

Վոսփոքն 12: Թ. 73.



Ճ.Փ.

ԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՆ ՎԻՃԱԿԻՆ

Քանիհօն արագ թաւալազլոր հոլովի,
Ով ամանակ, քոյին շրջան յաշխարհի
Ի զոր արդեօք ակընկալեաց թաղդունին
Հաւատալով ըեզ ցարդ ըզբաղդ վիճակին:

Թողեալ նորին ըզծընընդեան խանձարոր
Ծովագընաց չըւեաց ընդ ծիգ առաթուր
Եւ ի լերին մատախլապատ յայս սարս
Հզկայ առեալ զանձըն մարզեաց հանսպագ:

Զարմանազան փոփոխութեանց անդանօր
Ականատես ընդ միշտ եկաց անցընոր
Մերթ ըզհանգիստ անդորրաւէտ վայելեաց
Եւ մերթ զըտաւ ի կագ ընդ մեջ դըժավընեաց:

Յուզեալ ըստէալ ի վըրդովմնանց առտընին
Դո՞գ յուսաքեկ յարատեւեաց ի շատին
Երիցս երթեակ ի զոր անցին անդէն հունձ
Զըժամանեաց աջող բաղդին ուշ ի կործ:

Մինչեւ ցե՞րք Տէր, աղաղակեաց տարադէալ
Դաստապարեալ յայսմ՛ կացից յերաշխէալ.
Միթէ՛ այլ եւս երկարեացի՞ ամսնակն
Յաւերժաքար յայպն եղեալ յիմ՝ նըպատակ:

Եկեսցէ՛ Տէր ողորմնովթեանդ մեծ շընորհ
Ի վերայ իմ՝ տարաքաղիս անձկաւոր
Զի օրնեցից զերրորդովթինդ համազոյ
Յատառուեան ի պահէն մինչ յերեկոյ:



Ճ.Գ.

ՀԵՌԻ Ի ՀԱՅՐԵՆԵԱՅ

Մինչեւ այնպէս նըմդեհովթիւնս
Երկարեցաւ այլ եւը միւս.
Բաւ է ասեմ՝ ցե՞րք մնացից ես
Յատարական երկիր երէզ:


Անքարերեր եւ մացառուտ
Շահաստանին չիք նըմնանցիթ.
Ո՞ւր անդաստանք աստ արգաւանդ
Զի հատուցեն տերանց զաւանդ:

Յիմ՝ հայրենիս չիք ոք կարօտ
Լի են պրտուլք, արջառք յարօտ
Անդ երկլազործն ըըրտնավաստակ
Հնդ հովանեաւ ըմպէ զբաժակ:

Անդանօր զետ մի զեղազան
Հոսէ սրբնթաց ի միջերկրեայն
Վաճառականք համնայն ազգաց
Շեղջեալ կուտեն յարկեղ ըզզանձ:

Աստ սեպացեալ լերանց կատարք
Լոկ մեր աչաց լինին քանդակք,
Մերթ ի յերկնից հուր թօթափի
Մերթ ամազք ծածկին անտանելի:

Աստ չիք դալար մարզագետին՝
Չիք եւ չիք ինչ բարեաց բաժին,
Եւ ոչ թրոշունք քաղցրաբարբառ
Նըդիեհութեանս ըսփոփարար:



ԺԵ.

ՏԱԴՆԱՊԻ ՓՈՂԱՐԱՅ


Ժանտից ժողով զի՞ դաւադիք
Եկատորեալ շլոջիք, նանիք
Յայս պաշտելի սրբազան վայր
Վատեալ ի զին ի վաշտ լաշկար:

Սուրան զոռան խիզախընդդէմ
Ի զուպարած յատընին շէմ.
Աղէ՛ այնքան բուռն զօրութեան
Իցէ՛ մեզ հնար կալ յանդիման:

Տէ՛ր զօրութեանց նա կարի քաշ
Կարկառեաց առ մեզ զիւր Աշ.
Ըզբարպատակս ազատեացէ
Ի խաժամուժ այնմ ամեռիսէ:

Ուր դիւազէն ջոլիրն ի քալ
Հալածեսցին խայտառակեալ
Մի՛ յաւելցին յայսմ՝ ասպարէզ
Անդրադառնալ յանդըգնապէս:

Փողոց հընչիւն գումէ նոցին
Բզպարտութիւնս այս ահազին.
Միթէ՛ յաւէրժ ի յաջողուածս
Ուղեսցին քայլը ամբարքշտաց:



Ճ. 2.


ՀԱՅՈՎՃ. ԲԵՂԴՈՒԽԻՌՅ

Ողբա՛ Փողար, ողբա՛ Աթոռ
Զի չէ այլ աստ Տէրդ ալեւոր.
Այրիացեալ նփատ լալական
Տեսեալ ըգբեւ շորջ ըգիտւժան:
Գան խառնադանճ ըզգեցեալ զոկն
Առ խոշտանգել ըզըքընաղդ-ն՛,
Հասպա՛ քոյոց ծայն տուր մանկանց
Կական քառնալ ընդ այս հարուած:

Աւաղ բաղդին, աւաղ բիւր քեզ
Զի հեծութեան գլտար այսպէս.
Հող ըզգըլիովի արտասուալից
Լերանցն Հայոց գումեա զթախիծ:
Տառապեցաւ աստ ծախողակ

Կիւլիկիոյ սուրբ զահաւորակ,
Խընայեսցէ սիրտն ապառում
Վրշտաց նորին յոգնապատում:

Քամքեալ նորա կեր զարտասուաց
Եղեւ ծանակ իրոց դրացեաց.
Եւ յիշատակն անուան կորեաւ
Ի սիրելեաց աղաղակաւ:
Լաւ էր թէ չէր նորա անուն
Քանի ի փառաց գոլ բացազոյն:
Ողբամ ըզբեզ յաւերժաբար
Տհսեալ զորդիսդ աստ անդ թափսն:



ՓԷ.

ԽՇԽԱՆԱՅ ԿՊՋԻՆ

Առ ոստ ծովուն Մարմարայ
Խնն են կըզգեակը Բիւզանդեայ,
Յորոց մի մեծ Խշանաց
Անուն ունի յիւր վերայ:
Արքայազնեց աքսորավայր վաղեմի
Ուր նաև մեր կաց Ներսէս մեծ՝ տարի մի:


Մի քան ըզմի ճոխազոյն
Բիւր ապարանք կան կանզուն.
Անդ տենջապար այգօրէ
Պըճնազգեցիկ մեծասուն
Զօր հանապազ աստ յաճախին վազ առ վազ
Հեծեալ ի յէշ հասակը պէսպէս յլզքօսանս:

Աստ ծաղկոցք են բուրսաստան
Պուլակք մայրեաց զանազան.
Կըրկին բարձունք աստղաճէմ
Աստի անտի խոյանան:

Դեղազրւարճ հանդիսարանք են սնցնիւր
Կենսացընցուղ շընչէ անդ աստ սիւր զեփիւռ:

Ի զլուխս լերանց վանօրայր
Վայելչազարդ են պլասակք
Առ միջավայրն Տիսաքելոց
Եօրկուլիոց հովանակ.

Մօս առ երին Բասդ Բաղդ Ունի բանստեղծ
Զերծաւ Տերամք այն ինչ լինէր ծովահեղճ:



Ժ.Բ.


ՕՐԻՆԱԿ ԲԱՐՈՒԹԵԱՆ ԵԽ ԶԱՐՈՒԹԵԱՆ

Ի Սաղիմաց իջանելով
Այր մի երթայր ի յերկրով,
Յառապարի նա յեղակարծ
Անկառ ի ձեռս աւազակաց,
Զոր ըմբըռնեալ մերկացուցին
Եղին բազում վէրս ի մարմին,
Այնպէս լրքեալ անդ կիսամահ
Զարաշուէրք գնացին յայլ ուահ:

Դէսկ եղեւ զի ի տեղւոչէն
Անտի անցորդք կըրկին անցցէն.
Երկաքանչիւրն զանց արարին
Դարման տանել վիրաւորին:

Ուղեւոր մի անցեալ նոյնպէս
Սամարացի ըզնա ետես
Վաղվաղակի շարժեալ ի զութ
Պատեաց ըզլէրս ծածկեաց մերկոյթ :

Եղեալ ի զրաստն ըզիւանդն ած
Ի պանդոկ ինչ ուր յանձանձեաց.
Յերթալ իւրում՝ առ ինամն նորին
Եթող անդէն դրամն կըրկին.
Պանդուոյ տեսոն տրւեալ հրաման
Տանել նըմին կարի դարման
Խոստանալով եւս ի դարձին
Հասուցանել ըզծախս յետին :



ԺԹ.


ՀԻՄՆԱԳԻՐ ԵԿԵՂԵՑԽՈՅՆ ՀԱՅՈՅ Ի ԼԻՎՈՒՄԽՈՅ

Ազնըրազարմ ի Լիվունոյ
Էր զալթական այր մի յարգոյ
Որ հիմնադիր կաց մեծազործ
Եկեղեցւոյն Ազգին Հայոց :

Ասպետ Կարգին Զինուորութեան
Ուկեսայ խաչի, Կոմն Հատրանեան
Ազատանւոյն ընթերակայ
Կոչիր անուամբ Մամոս Աղայ :

Նախնիքն իշխանք յԱղուանիստան
Խնքըն ծընաւ ի նոր Քուղայն
Ուստղըն Յոլիսան, դուստրըն Լուչիա
Խօճա Ասլան փեսայ նորա:

Յաւէտ սիրով ազգայնութեան
 Հզզանձ վատնեաց եւ զինչս համայն
 Եւ աւանդ զի լստ արժանեաց
 Նա ըզվաստակս չըլայելեաց:
 Եր ոմն նորին ի պաշտաման
 Հսպասաւոր խարդախական
 Սա մըպիհեցաւ առ դորս լրքեալ
 Կենացն լինել դարանակալ:
 Նախ քան ըզլոյս մէն մի աւոր
 Կանխէր յաղօթս ի մօտ մասուոն:
 Յաւոր միում անտեսաբար
 Յետ աղօթից մինչդեռ զընայր
 Ժառայն ոխակ զաղտազողի
 Մըլինեաց ի կողս սուր երկայրի
 Տապաստ էարկ անդ զեղինլին
 Ուր յետ ժամու եհան զոզին:



¶


ՎԱՀԱԳՆ ՄԵԾԻ ԵՐԳԵԱԼ Ի ԳՈՂԹԱՅՆ

Ի հայրենի աստուածոց
 Վահագն արի փայլ ի բոց
 Խազմի կոչեալ մեծ հրաւէր
 Առ քըրմաց զունդ զայս խօսէր

Քաջ լերուք
 Իմ՝ մանկունք
 Եւ առոյգ
 Յաւէրժ դուք.
 Հնեթացէր
 Վալսել տէզ
 Թըշնամնոյն
 Զարամնոյն:
 Զեզ ունիք

Զօրսավիկ
Զերկնառաք
Շանթ կայծակ:
Քաջազունք
Ի բազուկ
Կայթ ի կայթ
Տուք ճակատ:

Քըմացն առեալ զայս պատզամ
Դունդ կազմեցին բազմերամ
Եւ անհեղիցն անդ համհարզ
Հապճեալ սլացաւ ի Դուզալս:



ԲԱ.

ՅԱՆՈՒՆ ՀԱՅԿԱՅ

Ո՛ նախդ ի հարս, որպիսի մեզ թողեր անուն
Հըսկայագործ յիշատակօք շրեղագոյն
Անոն փառաց յաւէրժ հընչեալ ընդ համասփիռ
Որ քոլորէ զանցեալ զներկայն միահամուռ:

Յորշափ կանգուն կայ Արարատ Երկնից ի տես
Գետք ըիլքեղիք հոսեն Տիգրիս եւ Եփրատէս
Ողողելով ըզհայրենիս մեր Հայտատան
Անմահատունկըն դրախտավայրնախկինուսան:

Անոն Հայկայ հըռչակաւոր կայ անմոռաց
Մինչեւ յերկինս յԱստեղատան ի յօրինուած.
Եւ հընչէ արդ՝ որպէս յԱսիս եւ յԵլրուազ
Այնպէս յԱփրիկ, յԱմերիկա, յՈվկիանիա:

Անոն յաւէտ պայծառագոյն որ ի ըլնէ
Նախադարեան աւանդոթիւնս քովանդակէ,
Եւ ամսնակը վլկայսրար արձանանան,
Ասորեստան պատմէ զարարս դիցազնական:

Չէ արժանի անուան այսմիկ որ առ օտար
Քաղաքացիս երթեալ իսպառ առնու դադար:
Այն ըլնածին չէր ինչ սերունդ քաջին հայկայ
Նա իւր որդոց միակ թող զայն առնաւատչեայ:



ԽԲ.

Ի ՎԱՐԴԱՎԱՐԻՆ

Նաւասարդ է հայրենաւանդ մեծ հանդէս
Յորում վարփառ վարդըն վառի սիրակէզ
Եւ ի Մասեաց հոյլք Մուզայից սաւառնին
Տաւդապրճիո ի տօնախումք բերկրագին:


Արիք պատրաստը օն դուք որդիք հայրենեաց
Չեւ արեզին ծագեալ ճամանչ լուսազգեաց
Փարուք տօնել տարեկանու պլճնազարդ
Ըզտենչալին Արամազնեաց Նաւասարդ:

Շեղշեալ կուտեալ առ գետափունս համերամ
Աշխոյժ հասակը հանդիսանան համակամ.
Փէսպէս հասակը ջուր ըգմիմեամքը արկանեն
Իրը յիշաստակ աւանդական ի նոյէն:

Որ աշառեալ իւր տասպանաւ անդանօր
Վըկայ ըզմիծ եթող Մասիս ալեւոր,
Յօրէ անտի ըսկիզբն առեալ եղեւ տօն
Ամ՝ ըստ ամէ ի Հայրենեաց անդ կենդլոն:

Արձակելով զարծաթափայլ զաղաւնիս
Բազմադարեան բարձունս ի վեր ի Մասիս.
Արամազնեաց ի Նաւասարդ գեղապար
Եկայը տօնել զնասեալ տո մեզ Վարդապատ:

Նիկոմեդիա 15. Է. 74:



Ի՞՞.

ՏիկնԱՅՐ Ա. ՆԵՇԵՏԵԿԵՑՆ ԱԹ ԵՊԻՇԵԻ

Որ ի պատեռունս եւ գահաւորակս
Գրգեալք եւ գրգուեալք էին թիւր կանայք
Տիկնայք փափկասուն աշխարհին Հայոց
Հզվայելս թողին համակեալ ի հոծ:


Ի նոցայն սրահակս եւ ի սրբակապանս
Զըգեցան ոստանք սարդի հանապազ.
Առագաստ նոցին հարսանեաց խորան
Հանդերձ ըսպասուք անկան ի կործան:

Չորսան ծաղկոցք այգիք զիներեր
Կողոպտեալ տարան ճոխ զանձոց մըթեր.
Խոտաբուտ կենօք եղեն գետնամած
Լըւեալ տըրտմազին ըզմիշտոս սիրելեաց:

Ոյք սլնեալը երբեմն ամ՛ջով երէոց
ծամկատը ի զարդ նըստէին յօթոց,
Կըցորդ կապելոց զըտան՝ նեղութեան
Կապելոց արանց անդ ի Պարսկաստան:

Կանխէին բոկոտն ի տուն աղօթից
Ուխտատը առ Տէր մատչէին անրիծ,
Զի համբերատար առանց վրիպելոյ
Հասցեն ի հանգիստ կենացն յերեկոյ:

Բազում՝ ծըմեռանց հալեցան սառոյցք
Եւ զարնանաքեր եկին ծիծեռունք
Այլ Տիկնայր Հայոց չըտեսին երբեք
Զամուսինս իրենանց յաստիս վըշտարեկ:



ԻՓ.


ԿԱՐՄԻՐՆ ՎԱՐԴԱՆ

Արեաց աշխարհ վատախտալակ
Առ Յազկերտի կալաւ փափաք
Զի ըզպաշտօն արեգական
Տարեալ մուծցէ ի Հայստան:
Հորդան տրեալ արշաւաբար
Պատենազարդ ի տէգ յասպաք
Փիղը եւ փաղանզը արեամբ ծաբատ
Մեր հայրենեաց զան դիմագրաւ:

Ծիդ այն տագնասպ ահեղազոյն
Ի մարտ դիմեաց որեալ ողջոյն
Վասն հաւատոյ անդ զառաջինն
Խաչազգեցիկ հարան ուժզին:

Արձանացաւ ըսպառագէն
Իւր վառելովք հայ Մակաբէն
Յաղթահարեալ զպարսիկ ջովիր
Խոնարհեցոյց տապաստ յերկիր:

Մամիկոնեանն վազեաց յառաջ
Իթր ըզդրդորդ ամսոց շառաչ
Եւ շանթահար ըզբիւր հարուած
Տարութերեաց յայն գուպարած:
Ըզդէն մնացոց Զքրադաշտեան
Արար յերկրէ հալածական
Եւ ընկալաւ թագ լուսափայլ
Առ սէր երկնից հահաստակեալ:



¶

ԱԹ ՍՐՅՈՒՀԻՆ ՀՌԻՓՄԻՄԷ

Ասրանազայ ժառանգորդք
Դիցազնազունք օրիորդք
Ելէք տօնել յԵրիզա
Չընաղագեղ կոյս Հոխիսեմեայ
Բզյաղթանակ
Մեծահրոշակ:

Յարեւմըտից փախըստեայ
Ի Հայաստան չըւեաց նա
Աւետաւոր փըրկութեան
Լուսվ պայծառ աներման
Սուրբ հաւատոց
Վառեալ ի բոց:

Աներեսոյթ զօրութիւն
Կանգնեաց ըզկոյսն աննշկուն .
Նա մարտապէս տապալեաց
Բզպլղծութիւն նիւաղաց
Գարճանք նորին
Յաւէրժասցին:

Օ՛ն Հոխիսիմեայ նըմանեալ
Դըստերք Հայկայ փայլ ի փայլ
Յօրինեցէք յԱսքանազ
Դրախտ տէրունեան հանապազ
Քի լոյս անճառ
Պահեսցի վառ :



12.

ԱՌ ՄՐԲՈՒՀԻՒՆ ՍԱՆԴՈՒԽՈՅ

Յայրարատեան հող արգաւանդ
Բուտա ծաղիկ անհամեմատ
Հնդ որ հանեալ անման Աստուած
Քաղեալ անտի յԱղին տընկեաց:


Հրաժիցն ակներեւ
Պարուք թեւ ի թեւ
Հրեշտակք համօլին
Գեղգեղեալ երգեն:

Բամբիշ եր դուստր արքայածին
Վատեալ ի սէր Աստուածային
Բուրեալ բուրէաց ի յԱյրարատ
Ըզնոտ անոյշ կոյս վարդամատ:

Դու ով պերճազգեաց
Պարծանք Հայրենեաց
Եղեր Քրիստոսի
Հարսլն ցանկալի:

Ուկելարսեան չըքնաղագեղ
Փողփողափայլ որպէս բիւրեղ
Աստեղատուն եղկնահանգէտ
Անմահացեալ կենօր յաւէտ:

Բազմեալդ լուսաւոր
Ի նոր անդ աթոռ
Դարձն՝ յԱյրարատ
Զակնարկ խանդակալթ:



ԱԷ.

ԱԽ Ա. ԿՈՅՍ ԱՍՏՈՒԱՃԱԾԻՄ

Ողջ լե՛ր Թագուհի
Մայր Տեսոն Յիսոսի
Չըքնաղ քան զարփի
Հանուլց սիրելի:

Ողջ լե՛ր Տիրուհի
Համայն աշխարհի
Երկնից Արքայի
Հարսն անպատմելի:

Ողջ լե՛ր Իսկուհի
Անաղտ ի մարմնի
Կուսան փարելի
Մաքուր աղանի:

Ողջ լե՛ր Մաքրուհի
Շուշան գեղանի
Վարդ հոտոտելի
Մանուշակ ծափ:

Ողջ լե՛ր Սըրբուհի
Ողջ յիմում սըրտի.
Ողջ լե՛ր մայր բարի
Ողջ յառէրժալի:

Ի ծննդավայրն 25. Պ. 75:



Կ2.

ԳԱՐԶԵԱԼ ԱԹ Ս. ԿՈՅՑՆ

Մաքիսմ քանի մեծ է անուն
Յեղելութիւնս ոչ զոյ համբուն,
Անուն որ է նըւիրական
Վառող ի սէր Աստուածութեան:

Երրեսկ լուսով աստեղց հանգոյն
Ի Կապուտողն շողայ նոր սին
Նոր առաջնորդ հարայէլին
Միայնակ շատիդ տանող յերկին:

Սըրբանքւագ երգեմ ըզնա
Սլացեսալ հոգւով հանդէալ նորս
Կոչեմ ըզնա լեզւով համայն
Դործ գերազոյն Արարէութեան:

Ռաքուն փըրկիչն փառօքն ամբաւ
ԵՇի յարգանդն եւ մարմացաւ.
Հոյլք հոգեղէնք մատեան պատկառ
Երկլըպագել խոնարհաբար:

Ողջոյն Կուսին որ ըզմարդիկ
Ած ի մեղաց կեանս յերջանիկ.
Հզմթշնամին դրժոխազգեաց
Խսպառ ըսպուռ յաղթահարեաց:

Պարիսպ յուսոյ պատենագէն
Պաշարելոց ի պատրողէն.
Ի պայքարի կայ մեզ պաշտպան
Պարտասելոց պատըսպարան:



Թթ.

ԱԹ ԶՈՐԱՎԱՐՆ ԵՐԿՆԱՅՆՈՑ

Հանդիսացեալ, ով Միքայէլ պաշտպան մեր,
Ճականա ըզկառափն ոսկին դառնավէր,
Որ արշաւէ ընդ Փողարայ քլուրն ի վեր
Բերեալ խրոխտաբար եւ մարտիկս ի քաներ:

Օ՞ն տոնկ գընդիս քաջալեր
Առ մըրցութիւն անվեհեր:

Որ յեթերաց արտահալած վանեցեր
Զըմքոստն ըզթելիար յանդըգնեալ յանլուր իսեն
Որ Որոտողին նըմանել բարբանջէր՝
Ի խորն էջ յանդունդ դրժոխոցն ի յերեր
Ուր տանջանք են վրշտըմքեր
Յամայր ընդ տիւ, ընդ գիշեր:

Պաշտակք նորին ածեալ ի վատն ի խոհեք՝
Դրզգուն ի միջի ըզնախանձ եւ ըզեռ,
Ատելութիւն ի նոսա քէն չարաշուէր
Ժամանին աստուստ ի յարկ մեր անհրատէր:

Հապա որդիք տիրասէր
Վանեմք զորեար տղնաւեր:



Է.

ԱԹ ՆՈՅՆՆ ԵՐԳ ԱՆՑԱՆԳ

Ակոյեան յահեղն ի հանդէս՝
Անմա՞ Աթոռոյն դըրդեալ ի վրէժ
Յանդունդ հոսեցեր զավստամբն
Որ ի մեծն յՈղիմակ կայր դարանեալ:
Հապա զունդ կազմեալ ի Փողար,
Նուազեմք զքոյ մըրցանս լու ի լու,
Համաձայնեալ զուարթնոց երամոյն.
Ոյք փողեն զայդ յականչ Անմա՞ին:

Պար ի պար յեռեալք յԵրկնաշէնն
Համհարզք չիք երբեք որպէս ըզնեա
Քան զարփիս համայն եւ զատեղու
Փայլէ ի կամար հոյլ ձեր ըլքեղ:

Պաշտպանք Փողարեան բանակին,
Պանծամք ընդ ձեզ ընդ մեծ յաղթանակին.
Միքայէլ ի պայծառ քոյ ճակատ
Սարդենիս կապեմք յաղթութեանց:

Խրախոյս մեր ընդդէմ սանդարաց
Ի թիկունս հաս մեզ հանապազ,
Կոխել առաթուր ըզպիղծ ջոլիք
Ածել ըզմարդիկ հնազանդ էին:
Հզվարձն ընդունել փոխարէն
Ի կեանս հանդերձեալ աշխարհին,
Ուրանօր պարեսցուք թեւ ի թեւ
Յաղթութեանց ծայնակցեալ անմանից:



Ա. Ա.

ԱՐ Ա. ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐԵՆՉԵԼԱԴՐՈՒԺ

Արի, օն դու նիկողայէ, թիկունս տալ
Յամնի ծով նաւարկելոց բալ ի բալ.
Տես զի խաղան ըզմեօք կոհակը երկուստեք
Անդոնդ խորին ըզմեզ առնէ ահաբեկ:


Պաղատողաց հանդէալ երկնից ձեռնամքարձ
Կարմեա զտագնապ եւ զարհալիրն մահազգեաց.
Անըստերիւր ժամնանեսցուք ընթացիւք՝
Յանդորրութեան նաւահանգիստ անմըղձուկ:

Հանդիսացիւր յաւէրժաբար դու պաշտպան
Որոց ի բեզ դիմեալ խընդըն ապաստան.
Փարատեսչիր ըզմէզ չարին ըզխաւար
Որով ըզքեզ դըրուստեսցուք բերկրաբար:

Երկըրպագեալ Աստուսծութեան՝ զի ըզքեզ
Հըսկող կարգեաց ի ծովագնացն ասպարէզ.
Աշ Անմահին հրաշակերտից հեղինակ
Առատացոյց շնորհօք ըզքեզ անքանակ :

Սատութութիւնդ ի բառակողմ՝ աշխարհի
Համայնասիիւ քաղցրանըւագ հընչեսցի
Ի քոյ ճակատ ուկիափայլ կապեսցուք
Աստեղազարդ թագ պարծանաց սըրբաշուք :

Քաղկեդոն 31. Ե. 76:



13.

ԱԹ Ս. ԱԼՈՉԻՈՍ Ի ՎԵՐԺԱՐԱՅԻ

Կայթեալ փափուկ աղիք քամքուան կայթ ի կայթ
Հընու զերկին լընու զերկիք ի սուրբ խանդ՝
Յիշատակաւ, յիշատակաւ Պարմանոյն
Որ յանմարմին զուարթնոց ի զունդ կայ
զուարթուն:


Ո՛վ զի հիսաքանչ այն տեսարան զերսաքանչ
Ցոլեալ ցոլսյ ազանց համայն ընդ առաջ.
Սուրբ Պարմանին սըրբազգեցիկ ի լողիկ
Փառաց ի փառս շըրջըրջի նա երջանիկ:

Նա փոխարէն ըզվարձ քըրտանց առ փոխան
Օր ըստ օրեայ մըրցեալ մըրցմանց ամենայն.
Անուշաբոյր բուրեալ շընչեաց նորին շունչ
Գամ ըան ըզգամ հընչեաց համբաւն մեծանուն:

Զոր տեսեալ Են զըսարթացեալ զըսարմացս
Եւս առաւել զիւր շնորհս ի նա հեղ անծկաւ .
Հասակ յորդողդ թեթեւազօք ի մարմին
Հասեալ յարբունս եհաս ի յարկս եթերին :

Անձն անծանծիր ընդ տիւ զիշեր ի վաստակ
Եղեւ եւ է արի արանց օրինակ .
Խառնեալ յաստեղս յաստեղատան միջավայր
Յաւերժաքար շողայ ի լոյս օդավար :

Կանխաժաման օն Բայդունին անդ կանխեր
Զի տատանեալ կարեօք տանչի կարեվէր
Բարեխօսեալ բարեխօսիւ յայնմ ամբոն
Մաղթէ ըզգէր հայցուածոց բիւր մաղթանօք :



ԼՊ.


Ի ՅԻՇԱՏԱԿ ԿՈՄԻՑԱՎԵՅ ՆԵՇԱՏԱԿԻ

Թափորակումք այց ժողովուրդն ելանէ
ի Քասան եւ հինգ Հոկտեմբերի յամ՝ յամէ
Արտատուաթոր անկեալ յերկիր յապաշտ
Երանելի նահատակին առ շիրմաւ :
Որ քահանայ էր ճրզնազգեաց Բարձրելոյն
Պաշտէր ըզնա ըզգաստ վարուք բարեբուն :

Ողջախորհուրդ ընթանալով պողոտայ
Ըզխեղաթիւր կարծիս խապատ մերժեաց նա .
Հետազօտեալ ըզնախնեաց զիւր հընաւանդ,
Զանկեղծական դաւանութիւն եզիտ անդ .
Մազիստր սաէր Շարակնոցին ի մատեան
ի հոռվմ եղաւ հիմնն հաւատոյ Կեփայեան :

Եւ Շնորհալին՝ Առաքելոց Դահերէց
ԲզՊետրոսնան խոստովանէք Աթոռ մեծ,
Դահուն այնմիկ լինել հնազանդ կալ միայօդ
Օքինաղբեաց Ժողով Սըսոյ Վեցերորդ:
Մի է Քրիստոս, Եկեղեցի նորա մի
Կաթողիկէ, Առաքելեան, Սուրբ կոչի:

Նդ որ ցասուցեալ երդուան սանդարձ
դաւապէս
Խոշտանգալից հանել ըզնա յողջակէզ:
Առեալ տարաւ դատաւորաց յանդիման
Վըկայեաց նա ճըշմարտութեան գոլ մի միայն.
Զարինն հեղեալ զհոգին յահճնեաց Արարէին
Այժմիկ բուժէ նա զախտամէտս հայրենին:



ԼԳ.



Ի ՃՌՈՒՆԴԻ ՄԵՍՐՈՊԱՅ ԱԴԱՄԵԱՆ

Ճընաւ սերկեան աւոք ի լոյս
Զաւակ արու մատաղաքոյս.
Եւ զարգասցի մըշտաքեղուն
Բիւր օրհնութեամբ Աքրահամնուն:

Ոյր այտք քընքոյշ ակնապարաք
Կան ժողովել համբոյր հազար.
Սիրոյ պըտուղ որ քան զուկի
Գերդաստանին է զըգուելի:

Երկինք ըզնա ամենուրեք
Խընամեսցեն ընդ այգ ցերեկ
Ցամայր ծագեալ նորին զարեգ:

Մի՛, Տէ՛ր, Հայկաց սելմն առ Օտարս
Անհետասցի երթեք ընդ վայր
Հստուերացեալ նըսեմաբար:



15.

Ի ՀԱՐՍԱՆԻՍ ՔԵՌՈՒ ԻՄՈՅ ԵԽԳԻՆԵԱՅ

Աստուած է սէր՝ բարեաց աղբիւր
Անով եղաւ աշխարհս համուր
Որ եւ Աղամն կարգեց համայն
Արարածոց ըլլալ իշխան:
Իսկ առանձին մեր նախահայր
Զէր վայելեր կեանք դիւրավար:

Ուստի երբոր էր քուն մըտած
Անոր ընկեր ստեղծեց Աստուած
Սոեալ ոսկեր մի մաս կողէն
Կազմեց զեւս կինն հողեղէն,
Զոր տեսնելով Աղամ՝ զըւարթ
Կին զայն կոչեց երախտապար:

Որմէ ըսկիզբ եղաւ անոնց
Ամուսնութեան սուրբ հարսանեաց
Որով կապով սեռ մարդկութեան
Անեալ լեցուց երկրիս սահմանն
Ու Քրիստոսի խորհուրդ եղաւ
Երջանկութեան գուշակ բարեաւ:

Արդ՝ հիմայ որ դուն սիրաստն
Երթաս քոյր իմ՝ հիմնել նոր տուն.
Մաղթէ եղբայրդ որ կենաց մէջ
Տեսնէք օրեր երջանկատենչ:
Հրակէ ձեր վրայ հրեշտակն անքուն
Օրհնէ Աստուած ձեր միութիւն:



12.

Ի ՄԱՅ ՑՈՎՀԱՆՆՈՒ ԱԴԱՄԵԱՆ


Ո՛վ տեսարան յոգնատլիսուր
Քանի՛ լալեաց հոսի աղքիր,
Համնակելով ի սուզ հանուր
Առհասարակ հասակ անձնիր:

Ի՞ցէ լեզու որ պատմեացէ
Զհեծոթիւնս մի ըստ միոչէ
Աստ լու ի լու քազմաթախիծ
Զազգատոհմին զամբաւ կըսկիծ:

Մահըն դըժինմ՝ յաւերժաքաղց
Զատոյգ մարմինն ի քաց կորզեաց
Քամնամենի կենաց յարքուն
Եղբարց իւրոց անձնեղազոյն:

Ողբան ըզնա համանգամիյն
Մեր ժողովուրդ աստ գաղթական
Զի դեռահաս ըզնա պատիք
Յափշտակեաց ճակատազիլ:

Փոքը միւս եւս նա պլճնազգեաց
Պասկ ի ճակատ կրէր սարդենեաց
Աւաղ բաղդին չեւ ժամանեաց
Դընել ի զլուխ պասկ տարդենեաց:



14.

ՏԵՊԱՆԱԳԻՐ. ՏԵՎԵՇԵԼՆՑ

Յոշեից էակ վերածեալ յաշխարհ,
ծընայ ի Կիւրին ի նոր ծընեալ դար.
Դըստերը իմ՝ էին ինձ հըմանք հազար
Նոքօք ի Բերիա զընացի թափառ:

Յական թօթափել օրհնասին ժամնեն
Թողի սրգազգեաց ըզուուն գերդաստան.
Հոգիս առ Դատողն եղեւ ապաստան,
Աստ մարմինս ի հող եղաւ հանգըստեան:

Մարմինք պահեալ ք յայսիկ դամսան
Հօր եւ Դըստեր նև Տեվեշելնց
Դըմոքը ծն. 1800, մեռ. 1862.
Շուշան ծն. 1858, մեռ. 1876.

Ի դրստերց քոյին մաքրափայլ Շուշան՝
Յիսր գարուն կենաց ոթեւտասնամեան,
Զոհեալ զանձն յօժար փարելի մահուան
Ի քոյդ այժմիկ, հայր, զալթիմ ի դամբան:

Նազելիս Երկնից յարեւ իմ' ոսկեակ
Ժըմնեալ խայտայի իբր անմեղ տատրակ.
Յաչազեղս աշխարհ ծըզեալ զիսր ակնարկ,
Ծըզնեաց տալ բըռնի ըղսէր ի ճաշակ:

Անդէն զիս քընքոյշ մայր քերք երեքին
Ի սին հարանութեան դառնապէս լսցին.
Այլ ես յուսալից ի սէր Յիսուսին,
Որպէս զամն արծուի կեանք իմ' նորոգին:



12.

ՏԵՊԱՆԱԳԻՐ ՄԱՐՐԱՖԵԱՆ ՊՈՂՈՍԻ


Բարուք բարեմիյն եղեւ փարելի,
Սաստար աղքատաց ըստ չափու կարի
Ծըրջեցաւ յաշխարհ առ շահ վաճառի
Հանգուցեալ յաստէն յիւրայոցն հեռի:

Վասփորայն ալիք ընթանան տըժգոյն՝
Գութել ընտանեաց զարկածն այն անհուն.
Ո՞վ, որպիսից ցաւոց են բանբեր.
Զիա՞րդ ժութեսցեն իւրըն վըշտըմբեր:

Աւան կողակցին, եղով զաւակաց,
Ոյց քօթս անպայման եհաս յեղակարծ.
Ողբալ ողբացան զայր առաքինին՝
Որ վաղ ի վախճան ժամանեաց վերջին:

Այսպէս Բաղրանին լալով արտաստեաց
Հզմլտերիմն իւր մեկնեալ ի կենաց:

Յերա 9. ԺԱ. 77.



Լ. Թ. *


ՏԵՊԱՆԱԳԻՐ ՇԽԴՈՒԹԵԱՆ ԼՈՒԶԵԱՑ

Իբր անիւ ի զիւ արագ սահեցաւ
Արեն իմ, երանգ էր այն թէ իրաւ.
Հստ ճակատազրի հանուր մարդկութեան
Պանդըխտեալ յերկրի հանգեայ յայս տապան:

Մեղուլ նահատակ հանդիպեալ յարկածս
Զեօթըն որնուցեալ զորդիս երկիւղածս,
Բզզո՞ երեցունց դեռ ի տիս համբակ՝
Տարսյ ի շիրիմ արտօսր ի դիմակ:

Ողբալ զիս ողբան տոհմ՝ եւ ընտանիք,
Որպէս տարաքաղղ մեկնեալ յաշխարհէ՝
Յուսով հանդերձեալ փառաց երջանիկ:

Հրաժեշտ տըխրական եղուկ սիրելեաց.
Յո՞ր վայր հեծեսցեն ընդ իմ անձկայրեաց
Տոկացեալ ի մարտ պատիր կենցաղոյս:



Խ.

ՏԵՊԱՆԱԳԻՐ ՈՒՂՈՒԹԼԵԱՆ ՄԿՐՑՉԻ

Գամ՝ քան ըզզամ՝ քաղղին յողդողդ
Ածայ ի թեւս ճանապարհորդ.
Տեսի զաւուրս ըզկեանս յաջող
Ընդ ճախորդաց միմեանց վովոյն:

Ո՛վ պատրանաց կենցաղական
Մանկանացուաց պանդըխտութեան.
Քանզի էի եւ այժըմ՝ չեմ,
Ի հոդ մահու դարձեալ նըսեմ:

Ամսանոթեամք հայր ընտանեաց,
Հաստատելով զիմ յոյս յԱստուած՝
Մեծարեցի ես ըգհաւատու:

Ամենեցուն լեալ փարելի,
Յալեւորեալ ի հասակի,
Ի յոյս անճառ չոզայ աստի:



ԽԵ.

Ի Ք'ՍԼՐՆ ՊԱԿԹԵԼՆ


Քընար Արքային
Պատրաստ, անմելին,
Որ տաս հոգենուէր
Օրհնոթեանց հրաւէր:

Քեզ անդ ներդաշնակ
Երկնից են հրեշտակը.
Քեւ մարդ սրբախոս
Մըրմընջէ սաղմոս:

Եւ մանկունք ասուն
Դասակցեալք ամէն
Քզգանզըս ձայնիդ
Յայտնեն ի ժըպիտ:

Աղէ օն տրեմն
Երգոց թոփի ի ճեմ,
Հեշտական ի լոր
Աւետեա' հանուր:

Զարարս առագ չօր
Որ բարեաց յորդոր
Ալեւոր յամայր
Փայլէ ի Փողար:



ԽԲ.

ՅԱՄԱՆՈՐՈՒՄՆ Ի ՅԱԿՈԲԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՄՆԻ

Հասեալն առ մեզ նոր տարի
Ժըմտալից ողջունի,
Գուշակ է մեծ բարութեանց,
Զոր Հաստիչ ծաւալեաց:
Նորայն քերի նախողջոյն
Արգասեօք թաթադուն.
Բարեաւ առ մեզ քոյ զալուստ
Ամանոր դու յերկնուստ:

Օն աստին մեր որեան
Զաղաղակ ամբարձէց ցընծութեան
Բա՛րէ բա՛րէ դուընչեցեն աստ շեփորայք.
Բա՛րէ բա՛րէ տարցին ի ափիւր արձագանգք:

Մանկունք Սլրբոյն Յակոբայ
 Չեզ պարծանք են ահա,
 Հայրենասէք քարերարք
 Կանգնեալ իբր ամբարտակք.
 Հապա ելքը համերամ
 Բոլորել զանթառամ
 Հզնակատուք զարժանին
 Հզպլասկու տարդենին:

Օն ի պար զուք համայն
 Մատերուք տատարաց զոխարան.
 Յաւէրժ, յաւէրժ հարէք ծազաց ի հրոշակ
 Յաւէրժ, յաւէրժ մանկանց կեցցեն քարերարք:



ԽԳ.

ՈՒՂԵՐՁ ԱԹ ԽՈՌԽՈՌՈԽԻՆԻ Ի ԿԻՒՐԻՆ


Հապ' արի՛ք համանգամայն
 Մանկուտի դեռափըթիթ,
 Երգել քաղցրաձայն
 Յարեւ մերոյ քաջ հովոին,
 Որ զթովն ահա Ժամանէ;
 Յայցելութին ի Կիւրին:

Մատաղատոնկ աղածրի
 Անջինչ ծօն ի սրբոէ,
 Պար առեալ սէր քեզ աստի
 Բերկլասնօք լնծայէ:

Հովին արթուն եւ լզզօն
 Ողջամիտ ախոյեան
 Դու ընկալցիս ըզբաքիոն
 Վաստակոց քոց փոխան:

Խորխոռունի ի զարմէ
Յազատացն այն ազնիս,
Եւ վարուք քով քերովքէ
Ես յայտնեալ ճշշգըրտիւ:

Յանգ Տէր Բարձրեալ, պահեսջիր
Ի զանուն Մելիտեայ
Հզնացրապետն յոգնաժիր,
Աջով քով յանձանձեա՛:



ԽԹ.

ՈՒՂԵՐՁ ԱՌ Հ. Տ. ՊԵՏՐՈՍ Ռ.

Ի կենդրոնէ Երկնազընդոյն տեսի ես
Զահ մի առկախ ուկենաճանչ բոցապէս.
Հայաստանեայց նաւուն ուղիղ կողմնացոյց
Յերկրէ յԵրկինս ըզժողովուրդն ածեալ մոյծ:

Այր անվըկանդ ճշշմարտոթեան սուրբ քարոզ,
Յաղթահարեաց տըզիտոթեան ըզգոռոզ.
Եւ հիմնարկեալ զեկեղեցիս ուշ ի կուրծ
ՀզՀայաստան առաքելովք ճոխացոյց:

Յաւէրժ զայն ջան վառ պահեսցես Խընամիղ,
Որոյ նըշոյլ ծաւալեսցի լուսաշոյ
Ի վերայ քոյ ժառանգութեան Կիւլիկիոյ:

Անպարազիր Աստուածոթիւն յաւիտեան,
Ի քէն ըրխեն պարզեւք բարփք ամենայն,
Դու ընդ Հովուին պահեա նաեւ ըզփարախն:



ԽԵ.

ՈՒՂԵՐՉ ԱՌ Հ. Տ. ՊԵՏՐՈՍ Թ.

Փափաքելոյն բիւր սրբոից իւ զարժանին
Կացըրդեցից տօնահանդէս հըրճուալին
Գումարելոյ եղբարց ուխտին յանդիման
Ցեղակարծուստ ի դարձ նորին յաղթական:
Յայսմ՝ Ուտան:

Հզնա արկածը բաժանեցին յընտանեաց
Հզնա ի տար պարագրեցին վըշտազգեաց,
Այլ նա յաւէտ փառս ի վերայ իւր փառաց
Կըրկին երկեակս ամաց համբեր արտալած
Եւ յեթերաց խընամակալ մահացուաց
Ցիւրոց շընորհ ըզնա զարդիս առաքեաց:

Առեալ զբամբիոն արտայայտիչ խընդութեան
Մասիր բամբիլ Հօր մեր ի լուր երգաբան
Առ որ չուժիմ՝ դու հոլաթեւ ժուժեսցես
Նորոգ կենաց ըսկիզբն առնել զայս հանդէս


Մըշտապէս:

Ողորմեաւ Հայոց բաղլին Ողորմածն
Բզուգն եքարձ Եկեղեցւոյն անձկութեանց
Խաղաղութիւն եւ հաշտութիւն սրվոեցաւ
Մէր ի համբոյր յաջորդեսցի հաւաստեաւ

Մեզ ամքաւ:

Ողջոյն ուրեմն Հոգեւոր Տէր ողջոյն քեզ.
Ողջամք առ մեզ գալրւատ քոյին հովուապէս
Յանդորրաւէտ յամնայր հանգիր յայս երաստ,
Շնորհեալ ըզծիր օրհնութեան քոյ բարեբասդ

Որդւոցդ ասու:



ԽԶ.

ՈՒՂԵՐՉ ԱՌ Հ. Տ. ՊԵՏՐՈՍ Ժ.

Ի Բիւզանդիոն նոր հայրապետ
Վերանըստաւ շըքեղ յաւէտ,
Երանեցին նըմս համայնք
Զի մեծութեանց եղեւ ժառանգ:

Այր երեւեալ ցանգ ի վաստակ
Յաջողութիւն եզիտ համակ.
Եւ խոչընդուռք ուղւոյ նորին
Դարձան իսկոյն հարթ եւ հեշտին:

Այնուհետեւ մուլթ վարագոյր
Բարձաւ յաւէտ իսպատ ըսպուռ
Խաղաղութիւն տիրեաց հանուր :

Այսան ճշգամք բարձրաստիճան
Առաջնորդեաց ժողովը բեան
Փառաց ի փառս յաւէրժական :



ԽԵ.

ՈՒՂԵՐՉ ԱՌ ԱՄԻՐԱՅՍ ՀԱՅԿԱԶՈՒՆՍ

Ի հանդիսի քարեքսաստիկ սերկեանս աւուր
Պարծի ընդ ձեզ իրաւապէս ազգ մեր հանուր .
Սեպուհ էք դուք եւ Հայրենիեաց աւագորեար
Սատարք կրօնիցս Ազգայնութեան որպէս
պատուար :

Երախտապարտք սաստարութեան ձերում՝
այնքան
Փողեմք ծագաց ըզհանգամանս ձեր պերճական .
Ցաւուրց յաւուրս անմահասջիք դուք յասպարէզ
Այս են մաղթանք եւ մըրմունջք մեր յաւէր-
Ժապէս :

Մի՛ եղիցի զի խամրեսցին տերեւաթափ
 Ձեր քանաւոր տունկը ի կաճառ թորգոմական
 Այլ հոյակապ յամայր կեցցեն Տեառն օրհնու-
 թեամբ :

Ով պարծանաց մեր վեհազանց չըքնաղասքանչ
 Որոց ի զլուխ հովանի կայ Անմաշին Աշ
 Ոյց յիշատակը անջինչ ի սիրտ մեր են զըրեալք :

Բերա 17. ԺԲ. 78.



ԽԸ.


ՈՒՂԵՐՉ ԱԹ Հ. ՊԵԽՈՆԻ Վ. ԱԼԻՇԱՆ

Տարեալ զիս բաղդն ի սուրբ Հազար
 Հի հրաշալեօք եցոյց զայն վայր,
 ի մէջ որոց Հայաստանեաց
 Մուզայն բազմէր խանդիւ արծարծ :

Խընդաց անձն իմ ընդ Հայ Մուզայն
 Ուկեղարեան առ մեզ թարգման,
 Ոյր սիրտ բարախ յանմա՞ բարբառ
 Երգեաց զանկեալսն ի յԱւարայր :

Նա զՀայրենիս լուսաբանեաց
Հզթագուցեալս մեզ յայտնեաց զանձ
Լավտեր պայծառ Մըսիթարեանց:

Յօտար ափունս քազմեալ Մուզայն
Կանգնէ զտաճար Ասքանազեան
Շարտարապետ միայնակ է այն:



Խթ.


ՈՒՂԵՐՁ ԱԹ Ն. Վ. ՈՒՄՊԵՐԴՈՍ Ա.

Ի Սալուսյեան Ազգատոհմէն շառափող
Խըրու յազնիւ տընկոյ զարմին բուսեալ ծիղ.
Միահեծան քազմի ի Գաճ Աւտնիոյ
Արքայ Ումպերդ բաստիւ իւր գեր ի վերոյ:

Յաւոր տօնից մարտանաւոյն Լեբանդեայ
Նա խընդամիտ ի Լիվոնոյ դիմեալ զայ,
Ուր իշանէ ի ծով ծիծաղ նաւն ամեն
Մարտակորով ցուցակութեամք առ ետեղ:

Բա՛րէ դիպացն բարէ աւուրս այս զըւարթ
Քանի խուժան այսըր դիմէ բարդ ի բարդ
Ժըլիտ յերեսս հանդերձանօք պլճնազարդ:

Հանդիսականքս եղանակեմք ամենայն
Կեցցէ Արքայ Արքայուհին եւ ժառանգն
Յաւէտ Կեցցէ Արքունական գերդաստան:



Ճ.

ՈՒՂԵՐՉ ԱՌ ԱՍՏՈՒՄՁԱՐԵԱԼ ԼԵԽՈՆ ԺԳ ՊԱՊԻ

Հրաւէր է օն Հայ որերոյն
Համախլմքիլ որդւոց հանգոյն՝
Շուրջ զԱթոռովն անխախտելի
Ուր Հովուապետ Լեւոն նըստի:

Որ մեր Ազին եղեալ սաստար
Գորովազութ որպէս ըզչայր
Ուրոյն կանգնեաց մեծ վարժարան
Ի մարզս ուսմանց Ասքանազեան:

Ճըշմարտութեան մեծ Քահանայ
Մեծ ի մարդիկ ծանուցեալ կայ
Զի մեծամեծ գործքն են նորա:

Հզտիեզերս համատարած
Հանճար նորին լուսաւորեաց
Առ ժամանումն անճառ բարեաց:

Յաւուր յորում բացաւ
Հելոնեան վարժարան ի չոռվմ:



ՑԱՆԿ

- Ա. Նախաբան առ Պաշտպանն.
- Բ. Ողոք առ Ս. Լուսաւորիչն.
- Գ. Գարուն եղանակ.
- Դ. Թիթեռն.
- Ե. Բան զաւեշտական.
- Զ. Սարսափ կեղակարծ.
- Է. Առեղծուած.
- Ը. Պաշտօն առ Աստուած.
- Թ. Ս. Քոյր վաղամենիկ.
- Ժ. Կոծ առանին.
- ԺԱ. Ի տես Հայրենեաց.
- ԺԲ. Յետ տամն եւ ութ ամաց.
- ԺԳ. Ակնկալութիւն վիճակին.
- ԺԴ. Հետի ի Հայրենեաց.
- ԺԵ. Տագնապ փողարայ.
- ԺԶ. Հառաչք Բաղդունոյ.
- ԺԷ. Իշխանաց կղզին.
- ԺԸ. Օրինակ չարութեան եւ բարութեան.
- ԺԹ. Հիմսադիր Եկեղեցւոյն Հայոց ի Լիվոնոյ,
- Խ. Վահագն մեծ երգեալ ի Գողթան.
- ԽԱ. Յանուն Հայկին.
- ԽԲ. Ի Վարդավառն.
- ԽԳ. Տիկնայք Ս. Նահատակաց առ Եղիշէիւ:
- ԽԴ. Կարմիրն Վարդան.
- ԽԵ. Առ Սրբութին Հոփախմէ.
- ԽԶ. Առ սրբութին Սանդուխտ.
- ԽԷ. Առ Ս. Կոյս Աստուածամայր.
- ԽԸ. Գարձեալ առ Ս. Կոյսն.
- ԽԹ. Առ Զօրավարն Երկնայնց.
- Լ. Առ Նոյնն Երգ անյանգ.
- ՂԱ. Առ Ս. Նիկողայոս Սքանչելագործ.

ԼԲ. Առ Ս. Ալոգիոս ի վարժարանի,
ԼԳ. ի Յիշատակ Կոմիտասայ նահատակի.
ԼԴ. ի Ծնունդ Մեսրոպայ Աղամեան ի Լիվոնց.
ԼԵ. ի Հարսանիս Քեռն իմնյ Եւզենեայ.
ԼԶ. ի մահ Յովիանու Վղամեան ի Լիվոնց.
ԼԷ. Տապանագիրը Տիվիթեանց ի Բերիա.
ԼԸ. Տապանագիր Սարաֆեան Պօղոսի.
ԼԹ. Տապանագիր Ուղուբլեան Հուչեայ.
Խ. Տապանագիր Ուղուբլեան Մկրտչի.
ԽԱ. ի Քնարն զալթեան ի Փողար.
ԽԲ. Յամնմարումն ի Յակոբեան վարժարանի.
ԽԳ. Ուղերձ առ Խորիոսունի ի Կիւրին.
ԽԴ. Ուղերձ առ Հ. Տ. Պետրոս Ռ.
ԽԵ. Ուղերձ առ Հ. Տ. Պետրոս Թ.
ԽԶ. Ուղերձ առ Հ. Տ. Պետրոս Ժ.
ԽԷ. Ուղերձ առ Ամերայս Հայկազո՞նս.
ԽԸ. Ուղերձ առ Հ. Գևոնդ Վ. Ալիշան.
ԽԹ. Ուղերձ առ Ս. Վ. Ումանդողոսի Ա.
Ժ. Ուղերձ առ Ասոււածարեալ Լեւոն ԺԴ. Պապն.



18890
18891
18892

2013

